

ՀԱՄԱՌՕՏ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱԲԿԵՐԻ
ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԱՆՈՐ ԲԱՐԲԵՐՈՒՆ, ԲԱՐԲԱՌԻՆ
ՈՒ ԱՌԱԾՆԵՐՈՒՆ

(Շար. տես՝ Բազմ. 1957, թ. 3-4, էջ 72)

ԳԼՈՒԽ Դ.

ԱՐԱԲԿԵՐՈՒ ԿԵՆԱԿՑԱԿԱՆ ԱՌՏՆԻՆ
ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. — ՁՄՐԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ

Ձիւնը ծածկած է ամէն վողմ, բարձրաբերձ ծառերը սպիտակ քողով մը ոտքէն մինչեւ գլուխները ցցուն ժայռերու պէս կանգնած են եւ կը սպասեն արեգակին բարերար ճառագայթներուն՝ որ վար թօթափեն իրենց վրայ շաքարներէ ի վեր կշող սպիտակ բեռը, թեւերն շտկելու եւ վեր բարձրացնելու համար դէպի կապոյտ երկինք. թռչունները լռած եւ պահառութիւնով են տանիքներու ցուրդներուն տակ՝ անօթի եւ դողդոջուն. ծիծառները շատոնց գաղթած են օտար եւ ջերմին երկիրներ. մերկ է բնութիւնը եւ խոր լուծեան մէջ ընկղմած. սահուն ջուրերը սառկորած. բոլորն աղբիւրները սառեալ են խոտով ծածկուած. հազիւ լսելի կ'ընեն խուլ խոխովները. մեռած է բնութիւնը եւ երթեւեկներն ու առուտուրները՝ դադրած: Մարդը միայն կ'ապրի իր ձմեռնային կեանքով մէջ. վառարանը բոցով կը ճարձատի յարստեւ եւ սեւ ծուխեր կ'արտաշնչէ բուխուրիկներէն դուրս: Մառանքը լեցուն կուշտ ու կուռ. օճախը կ'արծարծի համեղ կերակուրներն եփելու: Այր մարդիկ իրենց ներքին արուեստներով վը դրազին ցերեկը մինչեւ իրիկուն. տան տիկինը դադարէ մինչեւ կերակուրներով, կար ու կարկուտով եւ տան մաքրութեամբ. իսկ

տղաք եւ աղջիկները, օրուան դասերնին պատրաստած, կը լուսացուն, կը հազուին ու սղուն, մախաղնին կը պատրաստեն՝ շարան եւ շարան, ուրախ ու զուարթ դպրատուն երթալու համար. յետոյ տուն վը վերադառնան տաքցուցիչ ցփսիներուն մէջ փաթթուած, կայտառ ու կտրիճ:

Գիշեր է. բոլոր ընտանիքը ցած ու բուրակ սեղանին շուրջը ծալապատիկ բազմած՝ ընթրիքնին կ'ընեն ու կ'աւարտեն, եւ ահա կը սկսի հանգստեան ժամանակը՝ ժպտուն ու զուարթ: Գուռ դրացիներ, աղ-դակներ եւ բարեկամներ, յապտերներով ստէպ իրարու փոխացի կ'ընեն՝ օր մը ապուր, օր մը անոր տունը, կարգաւ, ուր կը խօսակցին ու վը զուարճանան, զիրար կը պատուեն ճոխ մառանին ուտելիքներով, խալճաղով, աղանձուած կուտերով, անոյճներով ու ըմպելիներով՝ մինչեւ կէս գիշեր: Այս ժամուս, արդէն շատ փոքրերը քնացած են, ուստի «Գիշեր բարի» մաղթելով իրարու, քնացած պառիկները շալկած կը մեկնին իրենց տունները: Իսկ տեղիք շուտով անկողին կը մտնեն, եւ անուշիկ ու մէլի մէլի կը քնանան մինչեւ արշալոյս: Երջանի՛կ քուն, երջանի՛կ կեանք:

Այս գիշերային այցելութեանց ժամանակ, բարեպաշտ եւ համեստ սովորութիւն է որ մարդիկ, կիները եւ մանուկները դատ խումբերով նստին, իւրաքանչիւր խումբ իրեն պատշաճ խօսակցութիւններով զրազի:

Այսպիսի ջերմիկ եւ մտերմիկ մթնոլորտի մէջ, ընդհանրապէս կիներու մէջ, շատ բնական, յաճախակի նշանախօսութիւն-

ներ կը պատրաստուին. ցած ձայնով եւ աչքախաղերով կը խօսակցին, որպէսզի տղաք եւ աղջիկները չլսեն. եւ կը յաջողին ընտանեկան նոր օճախներ շինել, համեստ ու պարկեշտ, ապագայ առողջ սերունդներու պատրաստութեան համար:

Մերթ զուարթ տեսարաններ կը ներկայացնեն այր մարդիկ եւ երիտասարդներ. կը պարեն, վը խաղան, կ'երգեն եւ երկուսն ընկերութիւնը եւ մանկտին կը զուարճացնեն անմեղօրէն՝ լուրջ ծերունիներու եւ պատաններու ներկայութեան առջեւ, ու կը մոռցնեն օրուան կրած նեղութիւններն ու տխուր պատահարները, եւ անոյճ ժպտալ որ ամէնուն երեսին վրայ կը փայլի...

—0—0—0—

2. — ՆՇԱՆՏՈՒՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Հարսանեկան հանդէսներու նկարագրութիւնը չսկսած՝ տեսնենք թէ որո՞նք արժանաւոր փեսացուներ եւ հարսնացուներ կը համարուէին Արաբկերցիներու մօտ:

Ա. — Մաքուր, պարկեշտ ընտանիքի մը զաւակը, որ հիմա փեսացու տիտղոսը կը կրէ, պէտք էր ունենալ հմայիչ առաքելութիւնները: Մանուկ հասակէն մինչեւ հիմա հլու հնազանդ գտնուած է իր ծնող հրամաններուն եւ օգոտակար խրատաց հրամաններուն եւ օգոտակար խրատաց ջանասիրութեամբ եւ յարատեւ եռանդով: Ընտանեկան վիճակին եւ գործերուն յարմար պէտք մը կարեւոր ուսումները աւարտած է. իր դպրոցական շրջանը բուրձնաւոր դրամ վատնել տալու, սիրեւեալ ուսումը, վրան գլուխը մաքուր պահելով, գիրք, տետրակ, մատիտ, գրիչ, մեկան ունայն տեղ չվատնելով ու պատըմելով ունայն տեղ չվատնելով եւ վկայատեղով: Ի վերջոյ, մրցանակի եւ փառքի կան թուղթի, տիպլումի արժանի փառք է տեսչին եւ ուսուցիչներուն գովեստներով: Եթէ մաքուր խղճմտանքով՝ հաստատա-

կան ըլլայ՝ հասարակաց պատասխանը, ուրեմն կեանքի առաջին հանգրուանին հասած է արժանաւոր կերպով, եւ ամէն գովեստի արժանի է, եւ փայլուն ապագայի մը ջահը վառուած կը համարուի:

Բ. — Եթէ պատանին բարձրագոյն ուսմանց փափաք եւ յարմարութիւն ունի, եւ կ'ուզէ համալսարանական շրջանն աւարտել՝ բժիշկ, ճարտարապետ եւ այլն ըլլալու համար, ծնողքը, եթէ դրամական կարողութիւն ունին՝ պէտք են ընդառաջ երթալ իրենց զաւակի փափաքին, պայմանաւ որ ամէն տարի կանոնաւոր կերպով քննութիւններուն մէջ յաջողի: Եւ ապա իր սիրած եւ յարմար մասնաճիւղն ընտրէ ու անոր դադարեցնելու հասնի: Ենթադրենք թէ քաջ եւ մասնագէտ բժիշկ մ'եղաւ. իսկոյն պէտք է հրապարակի վրայ գործի ձեռնարկէ, յաճախորդներ շահի ու բազմացնէ եւ հաւաքած դրամներն ամէն անգամ յանձնէ ծնողաց, հօր կամ մօր, կամ անոնց հաւանութեամբ դրամատան մէջ շահու դնէ՝ իրեն հարկաւոր դրամ մը քովը պահելով, եւ շարունակէ մինչեւ որ կոկիկ դրամագլուխի մը տէր ըլլայ:

Գ. — Եթէ չփափաքի վերոյիշեալ պայմանը ձեռք բերելու, այն ատեն պէտք է իսկոյն հօրը արուեստին հետեւի կամ իր սիրած արուեստին, եւ կատարելագործելով դրամ շահի ա՛յնքան որ կարող ըլլայ մտածել ամուսնական վիճակին վրայ եւ այս փափաքը համարձակի յարգանքով իր ծնողաց յայտնել՝ դնելով առջեւին, ըստ արարկերեան սկզբունքին, « ֆէսովը լեցուն դեղին ոսկի »:



Դատնանք հիմա աղջկան պայմաններուն:

Հարսնացու ըլլալէ առաջ, վերոյիշեալ Ա. պարբերութեան հարցումներն իրեն ալ կը վերաբերին՝ շատ քիչ տարբերութեամբ, որոնց պէտք է համապատասխանէ վարքով, բարքով եւ ջանքով. փափուկ

ըմպելիներով եւ նուռով... Այսուհետեւ
փեսացուն առելի իրաւամբ ստէպ այցելու-
թեան կ'երթայ նշանածացուն տունը, տա-
նելով միասին պէս պէս նուէրներ եւ սխա-
ղի փունջեր, ու կը յանձնէ ծնողաց, ա-
ռանց կարենալու օրիորդին հետ խօսակ-
ցել կամ նոյնիսկ տեսնուիլ, վասնզի ուրիշ
տներէ մը կը կատարէ բոլոր պատուասի-
րութիւնները: Եւ հարսնացուն բոլորովին
կը զգուշացուի նոյնիսկ դռներէն ու պա-
տուհաններէն դուրս նայիլ, իբրեւ ամօթ-
խածութիւն, մանաւանդ եթէ տուններին
հասարակաց բանուկ ճամբուն վրայ կը
նայի:

Նշանտուքէն վերջ, ուրիշ օր մը հար-
սընցուն մաղերուն հինա կը դրուի որ
կարմրին ու փայլին, նոյնպէս երկու ձեռ-
քերուն 10 մատները:

Փեսացուն՝ մէկ ճկոյթը միայն:
Ձեմ համարձակիր նշանտուքի բոլոր
արարողութեանց եւ հանդէսներուն մէջ
մտնել, որովհետեւ, դեռ մանուկ հասա-
կիւ հեռացած ըլլալով Արարիկէն՝ ուշ
դրած չեմ եւ զիտցածս ալ զրեթէ մոռ-
ցած: Կը թողում որ հասակաւոր եւ ա-
կանատես մը նկարագրէ զանոնք՝ բոլոր
հետաքրքրական եւ զուարճալի սովորու-
թիւններու մանրամասնութիւններով. եւ
ստուգիլ կ'արժէ լսել ու զիտնալ եւ ապա-
դայ սերունդին անմոռանալի յուշարձան
մը վ'ըլլայ: Իսկ ես կամուրջով մը կ'անց-
նիմ հարսանեաց հանդէսներուն:

Հ. ԱԼԵԿՍԻՍ ՅՈՎՍԷՓԵԱՆ

(Շարունակելի)

Տ Ա Ր Ե Պ Ա Ր Ձ

18 Մայիս 1940 - 18 Մայիս 1957

Ու տասնութն անգամ Մայիսն եկաւ, անցաւ,
Մայիսն իր վարդերով, թռչուններով անթիւ...
Բայց դուն ու ես, մա'յր իմ, նո'յն ցաւին դէմ անբաւ,
Նոյն սուղին մէջ անյլերջ կծկըւեցանք մեղմիւ...:

Կարծես մեռած չըլլար, կարծես հուրն ահարկու
վայրազ պատերազմին՝ ողջակիզած չըլլար
Հասակն իր բարտիի եւ իր աչքերն աղու,
Բանաստեղծի զոդարիկ քընարն իր ոսկեւար...:

Մեր չրթներուն վըրայ եւ մեր սրտին կառչած՝
Միշտ իր անունն ունինք քրդի մը պէս անոյշ:
Մեր տան շուքին ինկած՝ իր ըստուերն է առկայծ՝
Որ ամէն պահ կու գայ վերածաղկիլ իբրը յուշ...:

Մեզ հետ վաւրի կարծես, մեր խոկն անհունօրէն
Եւ ամէն պահ կ'ուզենք յանձնել իր յոյգերուն...
Կը լըսենք իր շէշտերն եւ կամ կ'ըսենք իրեն
Ինչ որ անցեալ հրճուանքն ու խինդն էր իր հոգւոյն...:

Մերթ կը խօսինք իրեն Երկրէն մեր լուսածիր,
Ու զիրքերէն՝ որ մեզ հասան հայրենիքէն.
Կռունկներէն՝ որ ա'լ կ'երթան, կու գա'ն արբշիռ,
Քերթուածներէ՝ որոնք ես ձօնած եմ իրեն...:

Կ'ուզենք որ զի'նք յիշեն եղանակներն ամէն,
Կ'ուզենք որ թե'րթ մ'անդամ յիշատակի վարդէն՝
Չըտարարդէն պաղ հովն... Կ'ուզենք բոլոր մարդերն
Անունն իր տան, խօսին անմահ իր երգերէն...:

Ա'խ, տասնութն անգամ Մայիսն եկաւ, անցաւ:
Մայիսի օր մ'այսպէս ան մեկնեցաւ տունէն...
Փունջ մը լեղակ ձեռքիս ես ման կու գամ տալաւ,
Կարօտներու սեմին միշտ գա'յն որոնելէն...:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ